տան, որի մեծագոյն մասին տիրած էր մի ոմն արաբ Աբի-լ-Վարդ անուամբ։ Նաջա պատերազմեցաւ նորա հետ, սպանեց նորան եւ առաւ նորա ամրոցները, եւս Խլաթ, Միլազկերտ[1], Մուշ եւ այլ գաւառները, իւր ձեռքի տակ ածելով Աբի-լ-Վարդի գոյքերի մեծ մասը, սակայն նա ապստամբեցաւ Սայֆ Դաւլա'ի դէմ...։ Վերջինս արշաւեց նորա վերայ պատերազմելու՝ նորա ապստամբութեան եւ անհնազանդութեան համար. բայց մինչ նա Միաֆարիքին հասաւ, Նաջա փախստեամբ ապրեցաւ նորա ձեռքից։ Սայֆ Դաւլա տիրեց նորա գաւառներին եւ ամրոցներին, զորս նա խլած էր Աբի-լ-Վարդից։

459 Թ. յոյն Թագաւորը զօրք ուղարկեց Մելազկերտ, (որ Հայաստանի գաւառներից մէկն էր), որ պաշարեց քաղաքը, նեղեց նորա մէջ բնակուող մուսլիմներին եւ տիրեց նորան ուժով եւ բռնութեամբ։

---

1 Հնոց Մանաւազակերտ։ Istaxri տալիս է Մանազկերտ مناز جرد ձեւը։